

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.:

Առանձին ծանուցումները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրություն մէջ:

Օտարապարտացիք դիմում են ուղղակի:

Тифлис. Редакция «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիպով:

Յայտարարութիւնները համար գծարում են խորանշարի բառին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՄՇԱԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Է Կ Ե Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոզամանյով:

ՊՐՈԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԻՒԹՅԱՆՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ: Հատով համարները 5 կոպեկ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакция «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիա Զրանսիա Խոստիս Գերմանիա Նամակ Թիւրքիայից:—ՀԵՌՈՒՎԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Դատիք բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Բաղդասար Տէր-Միքայէլեանց գնաց մեր խմբագրութեան մէջ պ. Քիւրքեանի ժողովածուն և վճարեց մեզ 20 ռուբլ:

ԲԱԳՈՒԹԻՑ մեզ գրում են որ դեկտեմբերի 2-ին հասա Բագու պ. Սաֆրազեանցի թատրոնական խումբը որ ներկայացուցին պէտք է տայ այդ քաղաքում: Նոյն տեղից մեզ գրում են, որ Երուսաղէմի վանքի միաբան Մամբրէ վարդապետը սկըսել է ժողովարարութիւն իր վանքի համար և հաւարել է արդէն 700 ռուբլ:

ԴԱԻԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

ԺԼ:

Գիշերային խաւարը սկսել էր թանձրանալ: Ատողեր այլ ևս չէին երևում: Միանգամ աշխարհի քանաճ երկինքը, սիւնեցի ամթխած կնոջ նման, սիրում է շուտ-շուտ իր գեղեցիկ գէղը թաղցնել: Ապիտակ ամպերը նուրբ քօղի նման ծածկել էին երկնքի երեսը: Ատողերի փոխարէն վառվում էին հայոց բանակապետները զինուորների բացօթեայ խորոպիները: Նրանք ափում էին իրանց շուրջը խիստ ախորժ լուսաւորութիւն, որով կարելի էր տեսնել զինուորների ուրախ դեմքերը, որոնք կրակի շուրջը նստած, կամ երգում էին, կամ զրուցում էին և կամ ծառերի ճիւղերից պատրաստած զամբիւրների վրա միս էին խորովում: Այնօրվայ աւարի առած օշխաքների շնորհիւ բանակի մէջ տիրում էր մի կատարեալ առատութիւն: Մի այսպիսի առատութիւն չունեցաւ մինչև անգամ Մովսէսի բանակը, երբ իսրայէլի Աստուածը նրա զինուորներին լորամարդիներ էր ուղարկում:

—Թէ որ մեր տէր Յարութը այստեղ լինէր,

ՄՐՈՒԿԱՅԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Կարծես այս տարի մի առանձին ախտ է եկել հայ ուսանողների վրա. չար բաղդը դարձեալ մի գո՞ւ տարաւ մեր միջից: Չէ անցել վեց ամիս և անաչորս ընկեր ենք կորցրել հիւսիսի ստանամանիքներում: Ուրեմն չորս անգամ պակասեց կարճ ժամանակում կովկասեան հասարակութեան միջից: Միթէ կովկասեցիները չեն խղճայ իրանց երիտասարդ որդիներն, որոնց իրանք ենթարկում են ամեն տեսակ նեղութիւններին, ուղարկելով հեռու հիւսիս բարձրագոյն ուսում ստանալու նպատակով: Գծուար է մեզ ապրել հիւսիսում. որ մէկին դիմանանք՝ պարտաւորւնքներին, սառը, մեղ համար անսովոր կլիմային, թէ չքաւորութեանը: Միթէ կովկասեցիները ուշադրութիւն չեն դարձնի իրանց զաւակների դրութեան վրա, նրանցից տարած բազմաթիւ զոհերի վրա, մեռածների ծնողներին լցոյց վրա թող հուաքվին բոլոր կովկասեցիները՝ ուսանողը, հայերը, վրացիները և դիմեն մեր բարեխնամ կառավարութեանը խնդիրով որ թոյլ տայ մեզ հիմնել մեր սեփական համալսարան թիֆլիսում: Եթէ չէր կարող օգնել մեզ, ներկայ սերունդին, գոնէ խղճալէր մեր յետագաներին»:

Կարգադր Գ. Չ. ի պատասխանը «Մեղուի»

Ինչքան ներքին ու մտքիներ կը հուաքէր, ասաց զինուորներից մէկը իր ընկերին, սաստիկ ծիծաղելով իր սրախօսութեան վրա:—Խաչը վկայ, մեր Տաթևի վանքի ուխտի օրն էլ այսքան մատաղներ չեն մորթվում:

—Մեր մտքածները մատաղներ չեն, ապա ինչ են, պատասխանեց նրան մի այլ զինուոր, նոյնպէս ծիծաղելով:— Միայն տէրտէրն է պակաս, որ աղը օրհնէ:

—Ես կօրհնեմ, գաւակներս, լսելի եղաւ խաւարի միջից մի ձայն: Մասաղ է, ապա ինչ է, և Աստուծան շատ ընդունելի մատաղ:

Զինուորները կրակի շուրջը նստած լինելով, նրա լայր թոյլ չէր տալիս նկատել խաւարի մէջ միայնակ կանգնած բարձրահասակ մարդուն, որ փաթաթված էր իր լայն վերարկով մէջ: Բայց հէնց որ նրա ձայնը լսեցին, բոլորը պատկասանքով ոտքի ելան, ասելով.

—Ախ, սրբազան, դե ես...

—Ես եմ, զաւակներս, նստեցէք, ասաց բարձրահասակ մարդը մօտենալով:— Նստեցէք և ձեր քէֆին կացէք, ես վաղուց արդէն օրհնել եմ ձեր զոհաբերութիւնները:

Զինուորները կրկին շարվեցան կրակի շուրջը, իսկ բարձրահասակ մարդը շքեցաւ գիշերային խաւարի մէջ: Դա ամբողջ Միւսեանց աշխարհի առաջնորդը՝ Ներսէս եպիսկոպոսն էր, որ միայնակ շրջում էր բանակների մէջ, դիտելու զինուորների դրութիւնը:

մէջ: Եթէ Գ. Չ. անքան ջերմ պաշտպան էր միշտ բէալակեան ու թեան բնի վրա և ինչպէս ինքն հաւատացնում է, մինչև անգամ յօդուածներ է գրել այդ մասին հին «Մեղուի» մէջ, ինչիցն է որ երբ Կ. Պօլսից նոր եկաւ հայոց այժմեան խումբը և մենք գրեցինք նրա ուղղութեան անյարմարութեան մասին, այն ժամանակ Գ. Չ. լուռ էր և, որքան յիշում ենք, նոյն իսկ «Մշակի» դէմ էր գրել նոյն «Մեղուի» մէջ: Երբի այն ժամանակ այնպէս էր հարկաւոր, իսկ այժմ ուրիշ կերպ: Գարձեալ մի անձնութիւն. մենք սկսել ենք մեր գրական գործունէութիւնը ոչ թէ 1872 թիւց, այլ 1865 թիւց և այդ ժամանակից անընդհատ գրել ենք հայոց պարբերական հրատարակութիւնների մէջ մինչև «Մշակի» հրատարակելը:

Քանի մի օր է որ ձիւնը եկած է թիֆլիսում և քաղաքիս փողոցներում բախիւրներով են ման գալիս: Մենք չենք յիշում որ ուրիշ տարիները ձմեռը մեզանում այդքան վաղ սկսվեր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳՆԱ

«Standard» լրագիրը առանձին նշանակութիւն է տալիս Վիէնայի իր թղթակցի հեռագրին, որի մէջ ասված է, որ Դանցիգի տեսութիւնից մի ամիս առաջ պէտք է անբաւականութիւն պատճառներ հռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի մէջ: Խոստիան գաղտնի բանակցութիւններ էր կատարում Ռուսաստանի հետ և պատրաստ էր նրա հետ դաշնակցութիւն կապել Աւստրիայի դէմ: Իշխան Բիւսմարկ, գերմանական զեւպանից Հոօմուս տեղեկութիւն ստանալով այդ մտադրութեան մասին, նախազրուշացրեց Աւստրիական կառավարութեանը, կայսրից Գանցիգի տեսութիւնը և օչնչացրեց ռուս-խոսակական դաշնակցութեան նախագիծը: Գրանից յետոյ խոստիան շուտակեց փոխել իր քաղաքականութիւնը և

բարեկամանալ Աւստրիայի հետ Այդ նըպատակով խոսակեան թագաւորը և թագուհին այցելեցին աւստրո-ունգարական կայսրին: Հումբերտ թագաւորի մինիստրները պատրաստակաւութիւն յայտնեցին մասնակցել աւստրո-գերմանական դաշնակցութեանը, յուսալով, որ Աւստրիան կը համաձայնի վերագրաձնել խոստիանի Տրենտինո կամ խոստիանի մի մասը, որ դեռ Աւստրիայի իշխանութեան տակ է: Բայց այդ առաջարկութիւնը ստանութեամբ ընդունվեցաւ աւստրիական կառավարութիւնից: «Standard» լրագրի կարծիքով այդ յայտնութիւնները ապացուցանում են՝ առաջինը՝ եւրոպական խաղաղութեան անհաստատութիւնը և երկրորդ աւստրո-գերմանական դաշնակցութեան ոյժը: Բերլինի և Վիէնայի լրագիրները առանձին նշանակութիւն չեն տալիս «Standard» լրագրի թղթակցի պատմութեանը, չը նայելով, որ նա բաւական հաւանական է:

ՅԻՆՆՍԻԱ

Յրանսիական սենատը նոյեմբերի 28-ի նիստին հաւանութիւն տուեց կրիգիտին գեկտեմբերի 2-ի գոհերի ընտանիքները վարձատրելու համար և այնուհետեւ սկսեց քննել կրիգիտ նշանակելու հարցը Տունիսի արշաւանքի համար: Վիճարանութիւնների ժամանակ դուքս Բրոյի մի ազգու ճառ արտասանեց այն վերաւորանքի դէմ, որ հասցնում են սենատին, առաջարկելով նրան սահմանադրութեան վերաքննութեամբ ինքնասպանութիւն գործել: Բրոյի խոստովանվում է, որ Տունիսի արշաւանքի համար պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է նախկին մինիստրութեան վրա, բայց մի և նոյն ժամանակ այժմեան մինիստրութիւնից նա պահանջում է բացատրութիւններ Տունիսի սպա-

—Նա միշտ ման է դալիս, ասաց զինուորներից մէկը:

—Գիշերները բռն չունի, աւելացրեց միւսը:

—Ասում են, տարեւը միայն մի անգամ է քնում, զատկի աւագ շաբաթի օրը, խօսեց երրորդը:

—Ինչու անպատճառ զատկի աւագ շաբաթի օրը:

—Նրա համար, որ Աստուած վեց օրում այդ աշխարհը ստեղծեց, իսկ եօթներորդ օրում, որ շաբաթ էր, ինքն էլ քնեց, հանգստացաւ:

Զինուորի բացատրութիւնը բոլորին հաւանական թվեց: Նա գրեց տեղեակ մարդ էր, փոքր հասակից վարդապետների մօտ սպասաւորութիւն էր արել: Իսկ ձրեան ճիւղ էր նրա ասածը, հասկանալի է, միայն այսքանը ճշմարիտ էր, որ Ներ էր սրբազանը շատ փոքր էր քնում, երբեմն անցնում էին օրեր, որ ամենեին չէր քնում: Նրա մի այսպիսի խոսակցութիւնը ստիժ տուեց ժողովրդի մէջ իր վերաբերութեամբ զանազան լեզուներով ստեղծվում:

Բարձրահասակ մարդը դանդաղ քայլերով անցաւ բանակի միջից, մօտեցաւ մի առանձնացած վրանի, որ լուսաւորված էր փողոցի լապտերով: Այստեղ պտուկած էին մի քանի հիւանդներ, որոնք նոյն օրվայ կուրի գաշտում վէրք էին ստացել: Մի քանի կնիկներ, հաւաքված հայոց մերձակայ օբաներից *) խնամք էին տանում վերաւորներին:

*) Որպէս նշանակում է իրաւաբանների օբանան, չաղքներում, լեռնային արօտատեղերի վրա:

Հայոց բանակները, ինչպէս յիշեցինք, տեղաւորված էին երեք կետերի վրա: Այդ երեք կետերից, որպէս երեք դռներից, բացվում էին երեք մուտքեր, որ տանում էին դէպի բերդը: Բանակներից մէկը գտնվում էր Գեղվայ գետի ձորամիջում: այստեղ էր Բայինդուր իշխանը, Մէլքե-Փարսազանը և Ալեքանդրի գնդապետը: Երկրորդ բանակը գտնվում էր Հալիձորի գետի վերին կողմի վրա, այստեղ էր Միխիթար սպարապետը իր զօրապետների հետ: Իսկ երրորդ բանակը գտնվում էր Հալիձորի գետի ներքին կողմի վրա, այստեղ էր Գաւիթ-բէկը իր զօրապետների հետ: Հալիձորի գետը և Գեղվայ գետը, կարկով միմեանց, կազմում էին մի եռանկյունի, որի մէջ դրած էր բերդը: Իսկ երեք բանակների իւրաքանչիւրը զետեղված էր այդ եռանկյունին կազմող գծերի վրա, որոնք ուրիշ ոչինչ չէին, եթէ ոչ, խոր ընկած և անտառաւոր ոչինչ չէին, եթէ ոչ, խոր ընկած և անտառաւոր միջով անցնում էին յիշեալ երկու գետերը: Այսպիսով բերդից ելքը դէպի ամեն կողմ փակված էր: Այլամազ-Կուրի-խանը իր ամբողջ պաշարված էր, որպէս մի գագան իր ուրջի մէջ: Արսարդները սովորաբար գագաններով ուրջի մուտքի առջև մուխ են դնում, որ նրանք դուրս գան իրանց զարսնից: Այդ միջոցի փոխարէն ծառայում էր հայոց թղթաւորների ծովը, որ աւելի թանձրացնում էր գիշերային մթութիւնը:

Գաւիթ-բէկի վրանի վարապարները ինչքան էին: Նա միայնակ էր իր վրանում, որպէս մի օտարա-